

1. Ինչպե՞ս կարող եմ մասնակցել մրցույթին

Ներբեռնե՞նելով Converse Mobile հավելվածը՝ կարող եք պատվիրել Woman'sCard՝ սպասարկման վճարի 50% նվազեցված արժեքով՝ քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում:

Եթե արդեն Converse Mobile հավելվածի օգտատեր եք և ունեք Woman'sCard, ապա մարտի 10-ից ապրիլի 7-ը ներառյալ կատարեք 30.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի (կամ համարժեք արտարժույթ) անկանխիկ գործարքներ, վճարեք Կոնվերս Բանկի Woman'sCard-ով ու ստացեք հնարավորություն մասնակցելու խաղարկությանը, որի ընթացքում կարող եք ստանալ Միջերկրական ծովով ճամփորդության ուղեգիր երկու անձի համար, Apple watches Ultra Series, Fujifilm Instax Mini 11, Xiaomi power bank, Xiaomi LED makeup mirror:

2. Ինչպե՞ս եմ ստանալու անհատական կոդը

Անհատական կոդը ստանալու եք Բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային հասցեին կամ հեռախոսահամարին, կատարած յուրաքանչյուր հանրագումարային 30.000 ՀՀ դրամի գործարքի համար:

3. Արդյո՞ք կարող եմ մասնակցել մրցույթին, եթե միայն կից քարտ ունեմ

Ոչ, հավելյալ և կից քարտերը չեն մասնակցում մրցույթին, հետևաբար կատարված գործարքները հաշվարկին չեն մասնակցում:

Եթե ունեք Converse Mobile հավելված, կարող եք բուկետների ընթացքում պատվիրել քարտ և ակտիվացնելով քարտը՝ մասնակցել մրցույթին:

4. Բոլոր գործարքները կարո՞ղ են մասնակցել հաշվարկին

Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները /ներառյալ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարները/, հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուժանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին: Հաշվարկին չեն մասնակցում նաև այն գործարքները, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ:

5. Ո՞վ կարող է դառնալ մրցույթի մասնակից

Մրցույթին կարող են մասնակցել 18 տարին լրացած ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ հաճախորդները, բացառությամբ Կոնվերս Բանկի աշխատակիցների:

6. Եթե իմ քարտը արտարժույթային է, ինչպե՞ս է կատարվելու հաշվարկը

Անկանխիկ գործարքների ծավալի հաշվարկը կկատարվի հետևյալ սկզբունքով՝ ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում հաշվարկին կմասնակցի հաշվեգրված գումարի դրամային արտահայտությունը, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

7. Ինչպե՞ս են ընտրվելու հաղթող մասնակիցները

Մրցույթի հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Ձեզ տրամադրված անհատական կոդերից պատահական ընտրության միջոցով: Ձեզ տրամադրված բոլոր եզակի անհատական կոդերը մասնակցում են մրցույթին միմյանցից անկախ:

8. Ինչպե՞ս եմ տեղեկանալու, թե որտեղ և երբ է կայանալու մրցույթի ամփոփումը

Մրցույթի ամփոփումը կիրականացվի Կոնվերս Բանկի ֆեսբուքյան էջի ուղիղ հեռարձակմամբ ս/թ մայիսի 5-ին: Ժամի մասին կուղարկենք ծանուցում Ձեր էլեկտրոնային հասցեին կամ բջջային հեռախոսահամարին: Նաև հաղթող ճանաչված անհատական կոդերը կհրապարակվեն՝ Բանկի պաշտոնական էջում և ֆեսբուքյան էջում՝ մինչև ս/թ մայիսի 8-ը:

9. Կարո՞ղ եմ հաղթած մրցանակը փոխարինել համարժեք գումարով

Հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացվում, և մրցանակը չի փոխարինվում այլ նվերով:

10. Կարո՞ղ եմ գլխավոր մրցանակը փոխանցել այլ անձի

Դուք իրավունք ունեք Գլխավոր մրցանակը փոխանցել/նվիրել Ձեր ընկերոջն այն պայմանով, որ նա ունենա Մոբայլ հավելված և լինի ակտիվ հաճախորդ: Ակտիվ հաճախորդ է համարվում վերջին մեկ ամսում առնվազն մեկ գործարք կատարած անձը: Այս ձևակերպումը կիրականացվի հավելվածի չատ օգնականի միջոցով, որտեղ հաճախորդը պետք է տրամադրի ընկերոջ տվյալները նույնականացման համար: Նվերի փոխանցման առավելագույն ժամկետն է 2023թ. հունիսի 12-ը՝ ժամը 18:00:

Այլապես գլխավոր մրցանակը կհամարվի ուժը կորցրած:

11. Ինչպե՞ս պետք է ստանամ մրցանակը

Մրցանակները ստանալու եք ամփոփիչ միջոցառման ժամանակ, որի անցկացման վայրի և ժամի մասին կտեղեկացնենք Բանկում առկա Ձեր էլեկտրոնային հասցեին ծանուցմամբ և/կամ հեռախոսազանգի միջոցով:

12. Ես գտնվելու եմ երկրից դուրս և գուցե չկարողանամ մասնակցել ամփոփիչ միջոցառմանը, ի՞նչ պետք է անել

Ներկա գտնվելու անհրաժեշտություն չկա, մրցույթը կայանալու է Կոնվերս Բանկի ֆեստիվալի էջի ուղիղ հեռարձակման միջոցով: Կարող եք հետևել ամբողջ ընթացքին: Հաղթողների ցուցակը կհրապարակվի մեր ֆեստիվալի էջում և Բանկի ինտերնետային կայքում:

13. Կարո՞ղ եմ մի քանի մրցանակ ստանալ

Այո, եթե Ձեր եզակի անհատական կողերից մի քանիսն են պատահականության սկզբունքով հաղթող ճանաչվել, ապա մրցանակները ևս կարող են լինել մեկից ավելի:

14. Ո՞ր դեպքում է մրցանակը համարվում ուժը կորցրած

Մրցույթի ամփոփումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2023թ. հունիսի 2-ը ներառյալ, կապի հաստատման անհնարինության դեպքում (չպատասխանելու, անհասանելի լինելու, Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ) Մրցույթի՝ Ձեզ վերաբերող արդյունքները համարվում են ուժը կորցրած:

15. Բանկը վիզան տրամադրում է.

Բանկը պատասխանատվություն չի ստանձնում կատարելու այլ ծախսեր, որոնք անհրաժեշտ կլինեն մրցանակի օգտագործման համար, այդ թվում՝ մրցանակը չի ենթադրում, որ Բանկը տալիս է երաշխիք, որ կկարողանաք ստանալ այլ երկիր մեկնելու թույլտվություն/վիզա, եթե այդպիսին պահանջվում է: Հաղթողը հավաստիացնում է, որ տեղեկացված է, որ մրցանակները ստանալու է «այնպես, ինչպես կա», ինչպես նաև ցանկացած լրացուցիչ ծախսերը/գործողությունները կատարվելու են հաղթողի կողմից: